ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի խոսքը «Զալցբուրգի սկզբունքների հիման վրա կրթության 3-րդ մակարդակի կառուցվածքային զարգացում» աշխատաժողովում

Հարգելի գործընկերներ, այսօրվա մեր հանդիպումը նվիրված է կրթական համակարգի կարևորագույն ուղղության՝ ասպիրանտական կրթության հիմնախնդիրներին: Բարձրագույն կրթության երրորդ աստիճանի բարելավմանն ուղղված հիմնախնդիրների քննարկումը սկսելիս անհրաժեշտ եմ համարում մի քանի շեշտադրումներ կատարել:

2003 թ. Բեռլինում կայացած նախարարական հանդիպումը Բոլոնյան գործընթացում ավելացրեց «Եվրոպական բարձրագույն կրթության և Եվրոպական գիտական տարածքներ՝ գիտելիքահենք հասարակության երկու հիմնասյուները» անունով Գործողությունների գիծը: Այն ընդգծում է դոկտորական ծրագրերի և գիտական կադրերի պատրաստման առանցքային դերն այդ համատեքստում: Այդպիսով՝ անհրաժեշտ համարվեց բարձրագույն կրթության երկու աստիճանների շրջանակից դուրս գալը և դոկտորական մակարդակը, որպես երրորդ աստիճան, Բոլոնյան գործընթացում ներառելը: Սրանով շեշտադրվեց բարձրագույն կրթության որակի բարելավման և, ընդհանուր առմամբ, Եվրոպական բարձրագույն կրթության մրցունակության բարձրացման գործում գիտական հետազոտությունների ու գիտական կադրերի պատրաստման կարևորությունը:

Գիտակցելով բնագավառի նշանակությունը, ինչպես նաև այն, որ հետազոտական կրթությունը ձևավորում է Եվրոպական համալսարանների հիմնական առաքելությունը՝ Ավստրիայի կրթության, գիտության և մշակույթի դաշնային նախարարությունը, Գերմանիայի կրթության և հետազոտությունների նախարարությունը և Համալսարանների Եվրոպական ասոցիացիան Զալցբուրգում նախաձեռնեցին դոկտորական ծրագրերին նվիրված «Բոլոնյան սեմինարը»՝ մարտահրավերները բացահայտելու և գործողությունների երաշխավորություններ մշակելու և եզրահանգումներ անելու համար: Զալցբուրգյան քննարկումների արդյունքում դոկտորական ծրագրերի առնչությամբ ձեռք բերվեց համաձայնություն 10-ը սկզբունքների շուրջ, որոնք անվանվեցին «Զալցբուրգյան սկզբունքներ»:

Սա կարևոր ազդակ է նաև Բոլոնյան գործընթացում ներգրավված Հայաստանի Հանրապետության կրթական համակարգի համար, քանի որ մեծանում է հայկական

համալսարանների պատասխանատվությունը բարձրագույն կրթության բոլոր աստիճանների ներդաշնակ զարգացման գործում:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը Եվրոպական բարձրագույն կրթության և հետազոտությունների տարածությանն ինտեգրման գործընթացների ակտիվ մասնակիցն է, ինչի վկայությունը համալսարանի ներգրավվածությունն է Եվրոպական և հայաստանյան մի շարք համալսարանների հետ ծրագրերի իրականացման գործընթացներին. ծրագրեր, որոնց նպատակը կրթության և հետազոտությունների որակի բարելավումն է, մեր ուսանողների, աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, գործնական հմտություններով օժտելը: Նշված ծրագրերի շարքում իր ուրույն տեղն ունի 2014 թ. մեկնարկած «Տեմպուս» ծրագրի «Վերիտաս» եռամյա նախագիծը, որի նպատակն է դոկտորական կրթության համակարգի բարեփոխումը, ինչով այն կհամապատասխանեցվի որակավորումների Եվրոպական շրջանակին և զալցբուրգյան սկզբունքներին:

Համալսարանում, նախքան նախագծի մեկնարկը արդեն իսկ ձեռնարկվել էին դոկտորական կամ ասպիրանտական կրթության ինստիտուցիոնալ կարողությունների մեծացման, հետազոտությունների խթանման որոշ քայլեր, որոնց արդյունքներն աստիճանաբար սկսում են երևալ: Մեր համալսարանում բարձրագույն կրթության երրորդ աստիճանի բարելավմանն ուղղված քայլերից են ասպիրանտուրայում կրթական բաղադրիչի ներմուծումը, գիտության ֆինանսավորման հանրապետությունում նախադեպը չունեցող կառուցակարգերի ներդրումը, ինչպիսիք են ներքին դրամաշնորհները, գիտաուսումնական խմբերը, «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ստեղծումը: Այս գործընթացում ներգրավվել են մագիստրանտներ և ասպիրանտներ, որոնց հետազոտական աշխատանքի համար համալսարանը վճարում է:

Չնայած որոշակի ձեռքբերումների, այդուհանդերձ, առկա են մի շարք խնդիրներ, որոնց հաղթահարումը կարևոր նախապայման է համալսարանի հետագա առաջընթացի, նրա մրցունակության բարձրացման ճանապարհին: Համոզված եմ, որ համալսարանի գիտամանկավարժական ներուժը բավարար է մեր առջև ծառացած խնդիրների լուծման համար: Առջևում մեզ սպասվում է բարձրագույն կրթության երրորդ աստիճանի բարեփոխման ու բարելավման մեծածավալ աշխատանք: «Վերիտաս» նախագծը կոչված է աջակցելու դրան, և այդ շրջանակներում

անցկացվող այսօրվա սեմինարը պետք է խթան հանդիսանա ձեռնարկվող քայլերի կարևորության ըմբռնմանը:

Ցանկանում եմ արդյունավետ աշխատանք:

Շնորհակալություն:

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ